ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2- 16
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի (Աշոցք, Բավրա, Զույգաղբյուր, Թավշուտ, Կարմրավան, Կրասար, Ղազանչի, Մեծ Սեպասար, Սարագյուղ, Սիզավետ, Փոքր Սեպասար բնակավայրերը ներառող) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի (Աշոցք, Բավրա, Զույգաղբյուր, Թավշուտ, Կարմրավան, Կրասար, Ղազանչի, Մեծ Սեպասար, Սարագյուղ, Սիզավետ, Փոքր Սեպասար բնակավայրերը ներառող) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծին և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններին (աղյուսակները կցվում են):

2. Հիմք ընդունելով սույն եզրակացությունը Աշոցք համայնքի (Աշոցք, Բավրա, Զույգաղբյուր, Թավշուտ, Կարմրավան, Կրասար, Ղազանչի, Մեծ Սեպասար, Սարագյուղ, Սիզավետ, Փոքր Սեպասար բնակավայրերի) ղեկավարին առաջարկվում է նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ավագանու հաստատմանը, որից հետո հաստատել ՀՀ Շիրակի մարզպետի համապատասխան որոշմամբ:

3. Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

4. Աշոցք համայնքի (Աշոցք, Բավրա, Զույգաղբյուր, Թավշուտ, Կարմրավան, Կրասար, Ղազանչի, Մեծ Սեպասար, Սարագյուղ, Սիզավետ, Փոքր Սեպասար բնակավայրերի) ղեկավարին և մարզպետին՝ ապահովել ՀՀ կառավարության 2011

թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ և 23-րդ կետի պահանջների կատարումը:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «16» «փետրվարի» 2022թ.